# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 2360 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 23-ի N 770-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 26-ի N 771-Ա-ից N 783-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 28-ի N 784-Ա-ից N 786-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 787-Ա-ից N 802-Ա, 2022 թվականի հոկտեմբերի 3-ի N 803-Ա որոշումների վերաբերյալ.

ՈՒսումնասիրությամբ պարզվել է, որ որոշումների մեջ օրենսդրական տեխնիկայի կանոնների տեսակետից առկա են հետևյալ թերությունները՝

1. N 770-Ա որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածի դրույթները սխալ են համարակալված:
2. N 771-Ա որոշման նախաբանում հղումը ՀՀ կառավարության որոշմանը սխալ է գրառված:
3. N 772-Ա որոշման մեջ «հետ համատեղ գրել նաև» բառերի փոխարեն անհրաժեշտ է գրառել «լրացնել հետևյալ բառերը» բառերը:
4. N 773-Ա որոշման մեջ հղումը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին թերի է գրառված:
5. N 775-Ա որոշմամբ տրամադրված հասցեն չի համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387 որոշմամբ սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի պահանջներին:
6. N 779-Ա որոշման մեջ անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Գ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Կատարող՝ Մ. Նիկոյան

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ թիվ 771-Ա, 773-Ա, 775-Ա, 776-Ա, 777-Ա, 778-Ա, 779-Ա, 780-Ա, 781-Ա, 782-Ա, 783-Ա, սեպտեմբերի 28-ի թիվ 785-Ա, սեպտեմբերի 29-ի թիվ թիվ 787-Ա, 788-Ա, 789-Ա, 790-Ա, 791-Ա, 792-Ա, 793-Ա, 794-Ա, 795-Ա, 796-Ա, 798-Ա, 801-Ա, 802-Ա որոշումների վերաբերյալ*

1. ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ 771-Ա որոշմամբ փոխվել է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի հողամասի հողատեսքը, ավելի բարձրարժեք՝ բազմամյա տնկարկների հողատեսքի: Համայնքի ղեկավարի որոշման մեջ հղում է կատարվել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմանը: Գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի հողատեսքերի փոփոխությունները կարգավորվում են ՀՀ կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ:
2. ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի թիվ թիվ 773-Ա, 775-Ա, 776-Ա, 777-Ա, 778-Ա, 779-Ա, 780-Ա, 781-Ա, 782-Ա, 783-Ա, սեպտեմբերի 28-ի թիվ 785-Ա, սեպտեմբերի 29-ի թիվ թիվ 787-Ա, 788-Ա, 789-Ա, 790-Ա, 791-Ա, 792-Ա, 793-Ա, 794-Ա, 795-Ա, 796-Ա, 798-Ա, 801-Ա, 802-Ա որոշումների վերաբերյալ առարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ- ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈՂԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

Է. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի N 773-Ա, N 782-Ա, 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 796-Ա, N 801-Ա և N 802-Ա որոշումների վերաբերյալ.

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 26-ի № № 773-Ա, 782-Ա և №796-Ա որոշումների մեջ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքին կատարված հղումները թերի են:

2022 թվականի սեպտեմբերի 29-ի № 801-Ա և № 802-Ա որոշումների վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չունենք:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Խ. ԽՆԶՐՅԱՆ

Կատարող Արմենուհի Մկրտչյան

Հեռ. (0312) 49000*166

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի հոկտեմբերի 10-ի N 2360 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2022 թվականի սեպտեմբերի 23-ի թիվ 770-Ա որոշման վերաբերյալ.

Թիվ 770-Ա որոշման հավելվածի «Ծախսային մասի» դրույթների հերթական համարակալումը սխալ է /Հիմք «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին պարբերություն/: Որոշման հավելվածի «Ծախսային մասի» 9-րդ կետի դրույթից հետո գրառված «6.» թիվը փոխարինել «10.» թվով:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝

Լ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

18.10.2022թ.

Կատարող՝ Ա.Հարությունյան